ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը – Արման Ասատրյան
2. Զբաղեցրած պաշտոնը - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի անասնաբուժության վարչության պետ:
3. Գործուղման վայրը և ժամկետները – Վրաստան (ք. Թբիլիսի), 2024 թվականի ապրիլի 21-25-ը:
4. Հրավիրող կողմը – Դաբաղի վերահսկման Եվրոպական հանձնաժողով (EuFMD):
5. Գործուղման նպատակը՝
   - Հիվանդությունների վերահսկման նպատակով ռիսկերի վերլուծության և քարտեզագրման համար անասնաբուժական ծառայությունների կարողությունների զարգացում,
   - արագ տարածվող հիվանդությունների ազգային ռիսկերի քարտեզների մշակում,
   - ռիսկերի քարտեզագրման ծրագրի ամրապնդում և գործածում (QGIS):
6. Քննարկված թեմաները (հարցերը) – ռիսկերի քարտեզագրում, ռիսկերի վրա հիմնված հսկողություն՝ դաբաղի և նմանատիպ անդրսահմանային կենդանիների հիվանդությունների վերահսկման նպատակով:
7. Հանդիպումները, ելույթները – Մասնակից երկրների (Իրանի Իսլամական Հանրապետություն, Վրաստան, Թուրքիա և Ադրբեջան) կողմից ներկայացվեցին նախկին սեմինարի ընթացքում ձեռք բերված գիտելիքների հիման վրա ստացված քարտեզագրման արդյունքները, որտեղ նշված էին հիվանդության ներթափանցման և տարածման առավել ռիսկային գոտիները:

8. Առաջարկությունները - FAO-ի փորձագետների հետ ձեռք բերվեց պայմանավորվածություն քարտեզագրման ծրագրի ուսուցումը շարունակել ինչպես առցանց, այնպես էլ առկա ուսուցման եղանակով:

Գործուղվող՝ Արման Ասատրյան 30.04.2024 թ.

(ստորագրությունը, ամսաթիվը)